

5.20. Թատերահանդիսային գործունեությունը 2006 թվականին

2006թ. հանրապետությունում գործել են 26 թատերահանդիսային կազմակերպություններ, որոնցից 15-ը՝ դրամատիկական, 4-ը՝ երաժշտական, 5-ը՝ տիկնիկային, մնացած 2-ը՝ պատանի հանդիսատեսի թատրոնն է և կրկեսը:

Մասնագիտացված թատրոնների քանակական բաշխվածությունն ըստ ՀՀ մարզերի և ըստ ենթակայության, 2006թ.

(միավոր)

	Թատրոնների քանակը	այդ թվում՝ ըստ ենթակայության		
		ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության	համայնքների	իրավաբանական անձանց
ք.Երևան	18	13	4	1
Արարատ	1	1	-	-
Գեղարքունիք	1	-	1	-
Լոռի	2	1	1	-
Շիրակ	2	1	1	-
Սյունիք	2	-	2	-
Ընդամենը ՀՀ	26	16	9	1

Թատերահանդիսային կազմակերպությունների կողմից 2006թ. ցուցադրվել է 2352 ներկայացում, որոնց 36.8%-ը՝ տիկնիկային, 10.0%-ը՝ երաժշտական ժանրի: ՀՀ Արարատի, Գեղարքունիքի և Սյունիքի մարզային թատրոնները ներկայացումներ են կազմակերպել նաև իրենց մարզերի գյուղական համայնքներում, իսկ ք.Երևանի մեկ թատրոն ներկայացումներ է կազմակերպել գյուղական համայնքներում:

Հանրապետությունում հյուրախաղերով հանդես է եկել 2 թատերային կազմակերպություն, 1-ական՝ Վրաստանից և ԼՂՀ-ից, ներկայացումների քանակը՝ 2:

2006թ. թատրոններ հաճախումների քանակը կազմել է 383.6 հազ., որոնց 22.5%-ը հաճախել է տիկնիկային թատրոններ, 10.1%-ը երաժշտական: Հանրապետության 1000 բնակչի հաշվով հաճախումները կազմել են 119:

2006թ. պատրաստվել և հանդիսատեսին է ներկայացվել 70 նոր և 16 հիմնավերականգնված ներկայացում:

Թատերական ներկայացումներից ստացված հասույթը կազմել է 250.4 մլն. դրամ, որի 0.3%-ը ստացվել է գյուղական համայնքներում կազմակերպված ներկայացումներից, 23.6%-ը՝ երաժշտական, 14.5%-ը՝ տիկնիկային ներկայացումներից: Միջին հաշվով մեկ ներկայացման մուտքի վճարումներից հասույթը կազմել է 106.5 հազ. դրամ, ընդ որում, գյուղական համայնքներում այդ ցուցանիշը կազմել է 15.1 հազ. դրամ:

Մասնագիտացված թատրոնների գործունեությունն ըստ ՀՀ մարզերի, 2006թ.

	Ներկայացումների քանակը, միավոր	Ներկայացումների քանակը մեկ կազմակերպության հաշվով, միավոր	Հանդիսատեսների թվաքանակը, հազ. մարդ	Հանդիսատեսների թվաքանակը մեկ ներկայացման հաշվով, մարդ	Ստացված հասույթը, մլն. դրամ	Ստացված հասույթը մեկ ներկայացման հաշվով, հազ. դրամ
ք.Երևան	1874	104	304.0	162	228.8	122.1
Արարատ	64	64	12.5	195	4.7	73.4
Գեղարքունիք	34	34	3.2	94	0.4	11.8
Լոռի	156	78	24.9	160	6.9	44.2
Շիրակ	146	73	24.4	167	7.7	52.7
Սյունիք	78	39	14.6	187	1.9	24.4
Ընդամենը ՀՀ	2352	90	383.6	163	250.4	106.5

Ֆինանսական միջոցների մուտքն ու օգտագործումը, 2006թ.

(մլն. դրամ)

	Ընդամենը
Ֆինանսական միջոցների մուտքեր	1644.9
այդ թվում՝	
ՀՀ բյուջեից (պետական, համայնքային)	1180.5
բնակչությանը մատուցված վճարովի ծառայություններից	250.4
նվիրատվություններից	44.7
վարձակալությունից	76.2
այլ	93.1
Ֆինանսական ծախսեր	1622.7
այդ թվում՝	
նյութական ծախսեր	101.6
ոչ նյութական ծառայությունների վճարումներ	200.7
գործուղման ծախսեր	18.0
աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ	916.0
պարտադիր սոցիալական ապահովագրական վճարներ	247.8
հիմնավերանորոգման, սարքավորումների և գույքի ձեռքբերման ծախսեր	67.3
այլ	71.3

Մասնագիտացված թատրոնների ֆինանսական մուտքերի ու ծախսերի բաշխվածությունն ըստ ՀՀ մարզերի, 2006թ.

(մլն. դրամ)

	Ֆինանսական մուտքերը		Ֆինանսական ծախսերը	
	ընդամենը	մեկ կազմակերպության հաշվով	ընդամենը	մեկ կազմակերպության հաշվով
ք.Երևան	1400.9	77.8	1379.2	76.6
Արարատ	31.9	31.9	31.8	31.8
Գեղարքունիք	22.2	22.2	22.2	22.2
Լոռի	59.8	29.9	61.7	30.9
Շիրակ	85.9	43.0	84.8	42.4
Սյունիք	44.2	22.1	43.0	21.5
Ընդամենը ՀՀ	1644.9	63.3	1622.7	62.4